# ՈՐՈՇՈՒՄ

30–ը հունվարի 2017թ

N 4-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի << Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի հունվարի 17-ի № 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> № 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի № 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի անդամների 21.12.2016թ. № 114 դրական եզրակացությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ն.Գետաշեն գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման սխեմայում ՝ իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական 0.02 հա /կադաստրային ծածկագիր 05-066-0515-0347 / վարելահողը, փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի /հենասյուների՝ 1 միավոր/ կառուցման համար, գանձելով ,ԲԷՑ.. ՓԲԸ-ից հողի կադաստրային արժեքի տարբերությունը 55700 ՀՀ դրամ:

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ն.Գետաշեն գյուղական համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

կողմ-9, ձեռնպահ-0, դեմ-0;

1. Ստեփանյան Նվեր
2. Թաթոյան Կառլեն
3. Ահարոնյան Սմբատ
4. Գորանցյան Սպարտակ
5. Բարբառյան Խաչիկ
6. Միրզաջանյան Նվեր
7. Կիրակոսյան Վազգեն
8. Գևորգյան Գագիկ
9. Փինաչյան Խաչիկ
10. Ղազարյան Սամվել
11. Արսենյան Արտակ

Համայնքի ղեկավար՝ Կ. Գևորգյան

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Էլ.Փոստ՝ nerqingetashen.gegharquniq@mta.gov.am Հեռ. (0-262)4-26-01

# ՈՐՈՇՈՒՄ

30 –ը հունվարի 2017թ

N 5-Ա

Ն. ԳԵՏԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԳԱԶ-3110 և ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՈՒԱԶ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԵՆԶԻՆԻ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՆԱԽԱՏԵՍՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին 2016թ դեկտեմբերի 16-ի ՀՕ 237-Ն օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով

1. Գյուղապետարանիծառայողական ԳԱԶ-3110 և հողարկավորության համար նախատեսված ՈՒԱԶ ավտոմեքենաների համար սահմանել օրական10/տասը/ լիտր չափով՝ տարեկան 3650լիտր:

կողմ-11, ձեռնպահ-0, դեմ-0;

1. Ստեփանյան Նվեր
2. Թաթոյան Կարլեն
3. Ահարոնյան Սմբատ
4. Գորանցյան Սպարտակ
5. Բարբարյան Խաչիկ
6. Միրզաջանյան Նվեր
7. Կիրակոսյան Վազգեն
8. Գևորգյան Գագիկ
9. Փինաչյան Խաչիկ
10. Ղազարյան Սամվել
11. Արսենյան Արտակ

Համայնքի ղեկավար՝ Կ. Գևորգյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

Ն. ԳԵՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Էլ.Փոստ՝ nerqingetashen.gegharquniq@mta.gov.am Հեռ. (0-262)4-26-01

# ՈՐՈՇՈՒՄ

30–ը հունվարի 2017թ

N 6-Ա

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ և ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ 2016թ-ին տեղի են ունեցել համայնքի ավագանու նոր ընտրություններ և ղեկավարվելով „Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և „Համայնքային Ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետով .

անագանին որոշեց

Տալ համաձայնություն համայնքի ավագանու անդամներ Կառլեն Թաթոյանին և Արտակ Արսենյանին ընդգրկելու Ն. Գետաշեն համայնքի Համայնքային ծառայության մրցույթային և ատեստավորման հանձնաժողովի անհատական կազմում:

կողմ-,11 ձեռնպահ-0, դեմ-0;

1. Ստեփանյան Նվեր
2. Թաթոյան Կառլեն
3. Աիարոնյան Սմբաթ
4. Գորանցյան Սպարտակ
5. Բարբառյան Խաչիկ
6. Միրզաջանյան Նվեր
7. Կիրակոսյան Վազգեն
8. Գնորգյան Գագիկ
9. Փինաչյան Խաչիկ
10. Ղազարյան Սամվել
11. Արսենյան Արտակ

Համայնքի ղեկավար Կ. Գնորգյան